## ***2025թ, 3-4-րդ դասարաններ***

### ***3 միավորանոց առաջադրանքներ***

1. Մարին, հաջորդաբար փոքր խորանարդներ միացնելով իրար, կառուցում է 3 × 3 × 3 չափսի խորանարդ: Կառուցելու ընթացքում նա լուսանկարում է 5 տարբեր պահերի, որոնք ցույց են տրված պատասխանի 5 տարբերակներում: Ինչպիսի՞ն է Մարիի չորրորդ լուսանկարը:




2. Ի՞նչ հերթականությամբ Սամվելը պետք է 2, 0, 2, 5 թվերը տեղադրի նշված չորս վանդակներում, որպեսզի ստացված արդյունքը լինի առավելագույնը:

A) 0, 2, 2, 5
B) 0, 5, 2, 2
C) 2, 5, 2, 0
D) 5, 0, 2, 2
E) 5, 2, 0, 2

$\square + \square - \square + \square$

3. Հետևյալ պարաններից ո՞րը հանգույց կառաջացնի, եթե այն ձգենք ծայրերից:




4. Լուսինեն պտտում է իր խաղալիք առագաստը: Պատասխանում նշվածներից ո՞ր առագաստն է նրանը:



5. Սովորական զառի վրա երկու հակադիր երեսների կետերի ընդհանուր թիվը միշտ 7 է: Ցուցադրված զառերից ո՞րը կարող է լինել սովորական զառ:




6. Ալեքսը ոտքը դրեց նկարում պատկերված գծերին: Այդ դեպքում ի՞նչ կտեսնենք նրա կոշիկի տակ:




7. Փոքր Կենգուրուն դպրոցից ցատկերով հասնում է Կենդանաբանական այգի հետևյալ կերպ. ↑ 2, ↖ 2, ↙ 1, ← 4, ինչպես ցույց է տրված նկարում:

Այնուհետև նա ցատկում է Կենդանաբանական այգուց հետևյալ կերպ.






8. Ո՞ր անիվը կարող է կառուցել Խորենը այս 3 ձողերով:



***4 միավորանոց առաջադրանքներ***

9. Նիկոն և նրա փոքր քույրը իրենց խաղալիքների խանութում վճարում են խեցիներով և մարգարիտներով: Յուրաքանչյուր խեցի արժե 6 միավոր, իսկ մարգարիտը՝ 1: Նշվածներից ո՞րի արժեքն է 16 միավոր:



10. Աննայի, Բաբկենի և Գայանեի ափսեներում կենգուրուի տեսքով մի քանի թխվածքաբլիթներ են դրված, ինչպես ցույց է տրված նկարում: Այնուհետև նրանք բաժանում են սկուտեղի վրա դրված 15 թխվածքաբլիթները այնպես, որ բոլորն իրենց ափսեներում ունենան նույն քանակությամբ թխվածքաբլիթներ: Այդ դեպքում քանի՞ թխվածքաբլիթ է վերցնում Աննան սկուտեղից:




A) 4  B) 5  C) 6  D) 7  E) 8

11. Առավոտյան 5 ընկերներ ունեին միանման բջջային հեռախոսներ, որոնք ամբողջությամբ լիցքավորված էին: Երեկոյան պարզվեց, որ Արմենը հեռախոսով խոսել էր այնքան, որքան Բենիկն ու Գոհարը միասին: Արմենի հեռախոսի լիցքավորումն ամբողջությամբ սպառվել էր: Դավիթն ընդհանրապես չէր օգտվել իր հեռախոսից: Ո՞ր հեռախոսն է պատկանում Էդգարին:




A) 1
B) 2
C) 3
D) 4
E) 5

12. Նշված պատկերներից ո՞ր երկուսը ամբողջությամբ կլրացնեն շախմատի տախտակը:




A) 1 և 2 B) 1 և 5 C) 3 և 4 D) 3 և 5 E) 4 և 5 Կենդանաբանական այգում Վազգենը կերակրում է 6 ոչխարների:

13. Ճաշին նա 210 գրամ չոր կեր է տալիս բոլոր ոչխարներին միասին: Ամենափոքր ոչխարին երկու անգամ ավելի շատ կեր է տալիս, քան մյուսներից յուրաքանչյուրին: Քանի՞ գրամ կեր է ստանում ամենափոքր ոչխարը:



A) 55 գրամ B) 60 գրամ C) 70 գրամ D) 75 գրամ E) 80 գրամ

14. Թոմը ցանկանում է պիցցան բաժանել 2 հավասար մասի: Նա նաև ցանկանում է, որ յուրաքանչյուր կեսի վրա նույնքան լոլիկ լինի: Թոմը դա կարող է անել երկու տարբեր կտրվածքներով: Ո՞ր գծերով նա պետք է կտրի պիցցան:




A) 1 և 3

B) 1 և 4

C) 2 և 3

D) 2 և 4

E) 3 և 4

15. Մարիան օղակներում գրում է 1, 2, 3, 4, 5, 6 և 7 թվերը, յուրաքանչյուրը մեկ անգամ: Ներքևի օղակներում գրված յուրաքանչյուր թիվ հավասար է դրա վերևում գտնվող միացված օղակների երկու թվերի գումարին: Ո՞ր թիվն է գրված աստղով նշված օղակում:




A) 2

B) 3

C) 4

D) 5

E) 7

16. Յակոբը 4 ուղղանկյուններից քառակուսի է պատրաստում: Դրանցից 3-ը ցույց են տրված նկարում: Պատասխանի տարբերակներից ո՞րն է դրանցից չորրորդը:



(A) 

(B) 

(C) 

(D) 

(E) 

## *5 միավորանոց առաջադրանքներ*

17. 6 զատիկներ ունեն 1, 2, 3, 4, 5 կամ 6 կետեր: Մարին զատիկների 4 լուսանկար է արել՝ 3-ական խմբերով: Յուրաքանչյուր զատիկ լուսանկարներում հայտնվել է նույնքան անգամ, որքան մյուսները: Լուսանկարներից երեքը և չորրորդ լուսանկարի ուրվագիծը ներկայացված են նկարում: Ընդհանուր առմամբ քանի՞ կետ ունեն Մարիի չորրորդ լուսանկարի երեք զատիկները միասին:



A) 9

B) 10

C) 11

D) 12

E) 23

18. Նելլին երկու անգամ հաջորդաբար ծալում է թղթե քառակուսին նշված գծերով, ինչպես ցույց է տրված նկարում: Հետո նա ծալված թղթի որոշ տեղերից կտորներ է կտրում: Բացելուց հետո Նելլին թղթե ծյան փաթիլ է տեսնում տե՛ս նկարը): Ինչպե՞ս է նա կտրել ծալված թղթի կտորը:



(A)  (B)  (C)  (D)  (E) 

19. Լևոնը սև և մոխրագույն խորանարդներից բուրգ է կառուցել: Նա դասավորում է խորանարդները այնպես, որ նույն գույնի երկու խորանարդ նիստերով չդիպչեն իրար: Նկարում ներկայացված է սև խորանարդներից մեկը: Ի՞նչ տեսք կունենա Լևոնի բուրգը վերևից:


(A)


(B)


(C)


(D)


(E)



20. Նկարում պատկերված է մեկ ամսվա օրացույց առանց ամսաթվերի:

2 ներկած օրերի ամսաթվերի գումարը 29 է: Շաբաթվա ո՞ր օրն է այդ ամսվա առաջին օրը:

A) Երկուշաբթի

B) Երեքշաբթի

C) Չորեքշաբթի

D) Հինգշաբթի

E) Շաբաթ

| Երկ. | Երեք. | Չոր. | Հինգ. | Ուրբ. | Շաբ. | Կիր. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

21. Շինարարության մեջ, որն ունի 100 սմ երկարություն և 60 սմ լայնություն, օգտագործվում են 11 միանման աղյուսներ: Որքա՞ն է յուրաքանչյուր աղյուսի չափը:




(A) 


(B)

(D) 


(E) 

22. 5 նույնատիպ անոթներում տեղադրվել են նույնատիպ գնդակներ, ինչպես ցույց է տրված նկարում: Այնուհետև այդ անոթներից յուրաքանչյուրի մեջ ջուր են լցրել: 1, 2 և 3 անոթներում ջրի մակարդակները նույնն են: 4 և 5 անոթներում ջրի մակարդակները նույնպես նույնն են և երկու անգամ ավելի բարձր, քան առաջին 3 անոթներում: Այնուհետև բոլոր գնդիկները հանել են:

Ո՞ր անոթում եղած ջուն էր ամենաքիչը:




A) Անոթ 1

B) Անոթ 2

C) Անոթ 3

D) Անոթ 4

E) Անոթ 5

23. Ռոզան գրել է իր մոտ եղած տարբեր մրգերից յուրաքանչյուրի քանակը:

Ցավոք, որոշ թվեր ծածկված են ներկով: Ընդհանուր առմամբ նա ունի 106 միրգ: Երկու տարբեր տեսակի մրգեր նույն քանակի են: Հայտնի է, որ նրա մոտի մրգերի մի երկու տեսակը երկու անգամ ավելի շատ է, քան մեկ այլ տեսակը: Յուրաքանչյուր տեսակի միրգ 10-ից ավելի է: Քանի՞ բանան ունի Ռոզան:




A) 13

B) 23

C) 43

D) 53

E) 63

24. Երկու կշեռք օգտագործվել են 3 տարբեր առարկաներ կշռելու համար, և արդյունքները ներկայացվել են նկարում: Տարբեր տիպի առարկաներ տարբեր զանգվածներ ունեն: Զանգվածները կարող են լինել 1, 2, 3, 4 կամ 5 կգ: Որքա՞ն է մեկ վարդագույն ուղղանկյան զանգվածը կիլոգրամներով:



A) 1

B) 2

C) 3

D) 4

E) 5